

Էներգետիկ աուդիտը մեր անվճար գործիքն է էներգիայի ձեռ խնայողությունները գնահատելու համար:

Էներգետիկ աուդիտն օգնում է հասկանալու Ձեր էներգետիկ ներկա իրավիճակը և գնահատում է էներգախնայողությունը, որին կարող եք հասնել նախատեսված ներդրումների օգնությամբ:

Որպեսզի հավակնեք մեր բանկի «կանաչ» վարկավորմանը, կպահանջվի էներգետիկ աուդիտի անցկացում, և այդ ծառայությունն անվճար կլինի Ձեզ համար:

Էներգետիկ աուդիտը իրականացնում են ոլորտում փորձառու մասնագետները: Նրանք ոչ միայն գնահատում են ներդրումների ազդեցությունը էներգախնայողության վրա, այլ նաև կարող են խորհուրդ տալ այլ միջոցների օգնությամբ հետագայում նվազեցնել էներգետիկ ծախսերը:

Էներգետիկ աուդիտորը կամ էներգետիկ խորհրդատուն հետաքրքրված չէ Ձեր գործարքի ֆինանսական մանրամասներով, այլ ուսումնասիրում է էներգետիկ իրավիճակը:

Այս բրոշյուրը ներկայացնում է էներգետիկ աուդիտի գործընթացի և համապատասխան պահանջների վերաբերյալ ընդհանուր ակնարկ:

Հարավարևելյան Եվրոպայի Green for Growth Հիմնադրամի մասին (GGF):
 Հարավարևելյան Եվրոպայի Green for Growth հիմնադրամն առաջին մասնագիտացված հիմնադրամն է, որի նպատակն է զարգացնել էներգետիկ արդյունավետությունն (ԷԱ) ու վերականգնվող էներգիայի կիրառումը (ՎԷ) Հարավարևելյան Եվրոպայում, այդ թվում Թուրքիայում, ինչպես նաև Եվրոպայի Արևելյան Հարևանության Տարածաշրջանում: GGF նորարարական հասարակական-մասնավոր գործընկերություն է, որը կոչված է նվազեցնելու էներգիայի սպառումն ու CO₂ արտանետումները և նախաձեռնվել է Եվրոպական ներդրումային բանկի և KfW Ջարգացման Բանկ կողմից: GGF ֆինանսական հաստատություններին տրամադրում է վերաֆինանսավորում ԷԱ և ՎԷ ոլորտներում ինչպես նաև ուղղակի ներդրումներ է կատարում նշված ոլորտներում ոչ ֆինանսական հաստատությունների կողմից իրագործվող նախագծերում: Այս նախագիծը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից:



© 2014 GGF Technical Assistance Facility

Այս նախագիծը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից:

ԽՆԱՅԵՔ ԷՆԵՐԳԻԱՆ, ԿՐՃԱՏԵՔ ԾԱԽՍԵՐԸ, ՕԳՏՎԵՔ ԱՆՎՃԱՐ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՌԻԴԻՏՆԵՐԻՑ



Էներգաարդյունավետության մեջ ներդրումների առավելությունները

Շատ երկրներում քննարկվում է էներգետիկ քաղաքականությունն ու էներգակիրների գների բարձրացումը:

Եթե անգամ մեր երկրում էներգակիրների գները համեմատաբար ցածր են, ապա այն կարող է ապագայում փոխվել, քանի որ էներգիան սակավ ռեսուրս է և սպառողների համար գները ցածր պահելու համար իշխանությունները սովորաբար շատ են վճարում:

Գործարար համայնքում գնալով մեծանում է իրազեկությունն առ այն, որ ավելի քիչ էներգիա օգտագործելով, կարելի է ձեռք բերել մի շարք մրցակցային առավելություններ: Ուստի զարմանալի չէ, որ ավելի ու ավելի շատ ընկերություններ են ներդրումներ կատարում էներգաարդյունավետ տեխնոլոգիաներում, որպեսզի, բացի խնայողություններից, օգտվեն հետևյալ առավելություններից

- Նվազեցնեն սպասարկման ծախսերը
- Բարձրացնեն արտադրողականությունը
- Ավելացնեն մրցունակությունը
- Մեծացնեն կայունությունը
- Երկարեցնեն սարքավորումների երկարակեցությունը




Հատուկ «կանաչ» վարկերի համար էներգետիկ աուդիտ է անհրաժեշտ:

Պահանջվող էներգետիկ աուդիտները հնարավորություն են տալիս պարզելու, թե արդյոք Ձեր կողմից նախատեսված ներդրումները համապատասխանում են մեր հատուկ «կանաչ» վարկերի թիրախներին: Այլ կերպ ասած, էներգետիկ աուդիտորը կգնահատի, թե արդյոք Ձեր նախագիծը կարող է հասնել էներգաարդյունավետության անհրաժեշտ մակարդակին կամ պահանջված քանակով նվազեցնել CO₂ արտանետումները: Էներգետիկ աուդիտի տեսակը կախված է ծրագրի/նախագծի ծավալից և տեսակից: Ստորև ներկայացրած դիագրաման ցույց է տալիս, թե որ տեսակի էներգետիկ աուդիտն է համապատասխանում «կանաչ» վարկերին:



Սարքավորումների կամ մեքենաների պարզ փոխարինում:

Պարզ էներգետիկ աուդիտ:



Ինչ է դա


Պարզ աուդիտները սովորաբար իրականացվում են սարքավորումների պարզ փոխարինման ծրագրերի դեպքում, օրինակ սեղմված բնական գազի սաքավորման փոխարինման դեպքում:

Ինչպես է իրականացվում

Հիմնականում այս տեսակի աուդիտները իրականացվում են հեռակա կարգով՝ էներգետիկ խորհրդատուի կողմից Ձեր փաստաթղթերում նկարագրվող առկա և նոր/նախատեսվող սարքավորումների տվյալների հիման վրա: Ձեզ այցելելն անհրաժեշտ է լինում, երբ փաստաթղթավորումը հասանելի չէ: Պարզ աուդիտը սովորաբար տևում է երեք աշխատանքային օր և տեղի է ունենում բանկի վարկավորման հայտի մշակմանը զուգահեռ:

Ծրագիրը ներառում է ավելի բարդ գործընթացների փոփոխություններ

Մանրամասն էներգետիկ աուդիտ



Ինչ է դա

Մանրամասն էներգաաուդիտը պահանջվում է էներգախնայողության ավելի բարդ ծրագրերի համար, օրինակ փոխարինման կամ բարելավման գործընթացներ, օրինակ՝ CHP կամ ջեռուցման արդյունաբերական համակարգի վերազինում:

Ինչպես է իրականացվում

Նման աուդիտների համար, էներգետիկ խորհրդատուին սովորաբար պահանջվում է հասանելիություն ձեր սարքավորումներին/տեղակայանքներին, որպեսզի հավաքի անհրաժեշտ տեղակատվությունը էներգախնայողությունը ճշգրիտ հաշվարկելու համար: Մանրամասն աուդիտը սովորաբար տևում է մինչև 6 աշխատանքային օր և տեղի է ունենում բանկի վարկավորման հայտի մշակման հետ միաժամանակ/զուգահեռ:

Եթե վարկը 500,000 եվրոյից ավել է:

Հետազայում իրականացվող աուդիտ:



Ինչ է դա

Եթե Ձեր վարկը 500,000 եվրոյից ավել է, բանկը պետք է ստուգի, թե արդյո՞ք էներգաարդյունավետության բարձրացման նախատեսված միջոցառումներն առաջարկվածի պես իրականացվել են և արդյո՞ք կանխատեսված էներգախնայողությունը գրանցվել է:

Ինչպես է իրականացվում

Հետազայում իրականացվող աուդիտները պետք է իրականացվեն Ձեր տարածքում, քանզի նպատակ ունեն դիտարկմամբ հաստատել, որ միջոցառումները նախատեսվածի համաձայն հաջողությամբ են իրականացվել: Նման տեսակի աուդիտները տեղի չեն ունենում, մինչև ծրագիրն ամբողջությամբ չի իրականացվում:

Անվճար ամբողջական էներգետիկ աուդիտ

Ամբողջական էներգետիկ աուդիտը մեր բանկի կողմից տրամադրվող և Green for Growth հիմնադրամի կողմից ֆինանսավորվող անվճար ծառայություն է: Նման էներգետիկ աուդիտը կօգնի էներգաարդյունավետության բարձրացման տարբերակներ մշակել, բացահայտելով Ձեզ մոտ էներգետիկ ծախսերը կրճատելու հնարավորությունները: Դա թույլ կտա ավելացնել արտադրողականությունը, բարելավել Ձեր արտադրանքի որակը և նվազեցնել կորուստները: Առկա էներգետիկ իրավիճակը վերլուծելու և ապագա զարգացումների վերաբերյալ օգտակար առաջարկություններ տրամադրելու համար էներգետիկ խորհրդատուն իրականացնելու է հետևյալ պարզ գործողությունները էներգետիկ խորհրդատուն պետք է

